ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ | № 11. 1954 | Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

# ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Մեծ հեղինակների անձնական գրադարանի բովանդակության ուսումնասիրումը նպաստում է այդ հեղինակների մտավոր հետաքրքրության շրջանակների որոշմանը, պարզաբանում է, թե գիտության ո՛ր բնագավառներն է հատկապես հետաքրքրել նրանց, ո՛ր հեղինակների ո՛ր երկերը և այլն։

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի անձնական գրադարանը։

1922 թվականին ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Ե. Շահազիզը Նոր Նախիջևանից Երևան է տեղափոխվում մշտական բնակություն հաստատելու համար։ Հենց այդ ժամանակ իր հետ նա Հայաստան է բերում բազմաթիվ արժեքավոր արխիվներ և գրքեր, այդ թվում Մ. Նալբանդյանի հարուստ փաստաթղթերն ու գրադարանը, որը պահպանված է եղել Նալբանդյանների ընտանիքում։

Այդ գրադարանը պահպանվում է նախ Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանում, ապա անցնում է Հայկական ՍՍՌ Գրական թանգարանին, ուր և գտնվում է այժմ։

Նալբանդյանի գրադարանի գրքերի թիվը հասնում է 254-ի։ Ե. Շահազիզի վկայությամբ գրքերը պահպանվել են Նալբանդյանների ընտանեկան սեփական պահարանում։ Գրադարանի գրքերը պահպանված են խնամքով, կազմված են ճաշակով, ունեն շքեղ կազմ և կազմի վրա կա ոսկետառ գրերով M. N. վերտառությունը։ Նալբանդյանի մակագրություններով գրքերն ունեն զմռսույթ կնիք, խարիսխ խորհրդանիշով։

Մեր հասած գրքերը Նալբանդյանի գրադարանի միայն մի մասն են։ Այդ գրքերից մի քանիսը Նալբանդյանը ձեռք է բերել Մոսկվայում բժշկական ֆակուլտետում ուսանելիս, երբ նա մտերմական կապեր է ունեցել ռուս առաջավոր մտքի ներկայացուցիչների հետ, կարդացել ժամանակի առաջավոր գրականությունը, լսել տաղանդավոր ռուս բնագետների դասախոսությունները։ Այսպես, Նալբանդյանի գրադարանում պահվում է բնագետ Ռուլյեի գիրքը՝ „Публичные лекции ординарных профессоров: Геймана, Рулье, Соловьева, Грановского и Шевырева, читаны в 1851 году в императорском московском университете“, М., 1852.

Գրքերի մի մասն էլ Նալբանդյանը ստացել է Պետրոպավլովյան բերդում՝ եղբոր և ընկերների միջոցով։

Բանտից իր հարազատներին և ընկերներին գրած նամակներից երևում է, որ նա բազմաթիվ գրքեր է խնդրել, որոնց մի մասը մենք չենք գտնում նրա անձնական գրադարանում։ Չենք գտնում նաև Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Հայնեի, Գյոթեի ստեղծագործությունները, որոնք անշուշտ եղել են Նալբանդյանի գրադարանում։

Հավանաբար տեղափոխությունների ժամանակ նա կորցրել, կամ ոչնչացրել է այդ գրքերը. մի մասն էլ գուցե բռնագրավվել է պետությունը։

1865 թվականի հունիսի 27-ի Մեզենցովին ուղղված գրության մեջ Նալբանդյանը նշում է, որ ոստիկաններն իրեն ձերբակալելու ժամանակ վերցրել են բոլոր թղթերը, աշխարհագրական քարտեզներ, մի քանի լուսանկար։

Բանտում եղած տարիներին Նալբանդյանը ստացել է ժամանակի նշանավոր գիտնականների գրքերը ուսումնասիրելու նպատակով։ Այսպես, օրինակ՝ 1863 թ. փետրվարի 17-ի նամակում գրում է. «Ամենից շատ ինձ ուրախացրեց Ֆոշեի գիրքը», կամ մի այլ նամակում՝ «Շերրի գիրքը մոռացաք բերել, որը վաղուց խնդրել էի»։ Գրադարանում պահպանվում են այդ երկու գրքերը. 1) Фоше Леон, Очерки Англии, перев. Демитьев и Хлебников, СПБ, 1862, 2) Шерр, Всеобщая история литературы.

Նալբանդյանի գրադարանում գտնվում են նրա հարազատներ՝ Գրիգորի, Ղազարոսի, Լուսեղենի մակագրություններով գրքերը, ինչպես նաև ընկերներից, ուսուցիչներից և բարեկամներից ստացված գրքեր։ Այսպես, օրինակ՝ իր ուսուցիչ Գաբրիել Պատկանյանը՝ Հարություն Եղեսացու «Ներբող որդվոյն որոտման» գիրքը նվիրել է Նալբանդյանին հետևյալ մակագրությամբ «Ի Գաբրիել Պատկանյանոյե առ Միքայել Ղազարյանց հիշատակ, 1845, նոյ. 98»։

Այնուհետև հիշատակության արժանի է կոմպոզիտոր Հովհաննես Սահրատյանի թարգմանած «Տրովատոր» գիրքը, որը լույս է տեսել 1864 թվականին։ Գրքի մակագրությունից երևում է, որ Սահրատյանը թարգմանությունը կատարել է Նալբանդյանի խորհրդով։ Թարգմանչի կողմից Նալբանդյանին նվիրված օրինակի վրա կարդում ենք. «Ազնիվ պարոնի Միքայել Նալբանդյանց, այս թարգմանության տված բարի խորհրդի համար շնորհակալությամբ և հարգությամբ նվիրում է թարգմանիչը»։

Պահպանված գրքերի մի մասը Նալբանդյանը ստացել է Վենետիկից. արխիվում պահպանվում է Վենետիկից ստացած գրքերի՝ իր կողմից կազմված ցուցակը, որտեղ նշված են գրքերի գները և ծանոթություն է տրված նաև իր պահանջած գրքերն ստանալու, պակասող գրքերի և այլ հարցերի մասին։ Ցուցակում նշված է 43 անուն գիրք, որոնք մեծ մասամբ վերաբերում են հայ մատենագրությանը։ Ցուցակը տարեթիվ չունի, բայց քանի որ այդ ցուցակում խոսվում է 1864 թվականի հրատարակությունների մասին, պետք է ենթադրել, որ այն կազմված է 1864 թ. կամ հետո։ Ցուցակից երևում է, որ գրքերի համար վճարել է 680 ֆրանկ 75 սենտ և պարտք է մնացել 4 ֆրանկ 6 սենտ։ Արխիվում մենք հանդիպեցինք Նալբանդյանի ձեռքով գրված մի այլ ցուցակի, որտեղ նշված են 96 անուն գիրք, հայերեն և ռուսերեն։

Գրադարանում կան մի քանի գրքեր, որոնք ձեռք են բերվել անհատ մարդկանցից, դրանցից հիշատակության արժանի է Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքի 1862 թվականի հրատարակությունը։ Գիրքը ցենզուրայից թաքցնելու նպատակով կազմված է «Սաղմնաբանություն» վերնագրով գրքի հետ։ Նույն այդ կազմած գրքում գրված է Տիգրան Նավասարդյանի «Ֆրիդուլի, կամ սեր և ատելություն»

թարգմանության անվանաթերթը. պետք է ենթադրել, որ «Երկրագործության» այդ օրինակը պատկանել է Տիգրան Նալբանդյանին։

Ինչպես հայտնի է, Նալբանդյանը բանտում կարդացել է Աբովյանի «Վերք Հայաստանին» և կատարել իր դիտողությունները գրքի վրա։ «Վերքի» այդ օրինակը 1922 թ. թանգարանին է նվիրել Ե. Շահազիզը, որը այն նվեր է ստացել Կիևի հայոց աղոթարանի քահանա Մնացականյանից։ Գրքում դիտողությունները արված են 74, 221 էջերի լուսանցքներում։

Այնուհետև՝ գրադարանում գտնվում է Նալբանդյանի աշակերտ Գեղամյանի „Общая зоотомия“ գիրքը, որի վերջին էջում կատարված է Գյեբովից մի մակագրություն, Ստ. Նազարյանցի „Обозрение гайканской письменности в новейших временах“ հեղինակի ընծայականով Էկենյանին։

Նալբանդյանի գրադարանում պահպանվում են գիտության բոլոր ճյուղերին վերաբերող գրքերը։

Պահպանված գրքերի մեծ մասը հայերեն և ռուսերեն լեզուներով են. կան նաև օտար լեզուներով՝ ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն և հունարեն։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայերեն գրքերը, որոնք վերաբերում են լեզվի, գրականության և հայ մատենագրությանը։ Հայ գրողներից կան՝ Գ. Պատկանյանի, Ռ. Պատկանյանի, Ալիշանի, Ստ. Նազարյանցի, Աբովյանի, Թաղիադյանի աշխատությունները։ Վերջինիս «Ճանապարհորդություն ի Պարս» գրքի բաց էջի վրա ուրիշի ձեռքով գրված է մի քառյակ։ Նալբանդյանը Թաղիադյանի այս գիրքը հավանորեն բերել է Հնդկաստան կատարած ուղևորության ժամանակ։

Արժե հիշատակել «Մուղայք արարատյան», «Շավիղ լեզվագիտության» գրքերը, պատմիչներ Ագաթանգեղոսի, Եղիշեի, Խորենացու, Փարպեցու աշխատությունները, Մխիթար Գոշի առակները, Չամչյանի հայոց պատմության 1-ին, 2-րդ, 3-րդ հատորները և այլ գրքեր։ Կան մեծ թվով բառարաններ՝ ֆրանսերեն-հայերեն, հայ-թյուրքերեն-անգլերեններեն։ Նալբանդյանը նույնիսկ հետաքրքրվել և ուսումնասիրել է խալդերեն լեզուն. գրքերի մեջ գտնվում է երկու ձեռնարկ խալդերենի մասին։

Նալբանդյանը կատարել է հայոց աստվածաշնչի և հունական ու եբրայական բնագրերի համեմատությունը։ Այս կապակցությամբ նա ուսումնասիրել է աստվածաշնչի մի քանի հրատարակությունները. գրադարանում կան 1733, 1805, 1817 թվականների Վենետիկի և Պետերբուրգի հրատարակությունները, որոնցից մի քանիսի վրա իր ձեռքով մակագրված է՝ «ի գրոց Միքայել Ղազարովի Դարբինյանց». կա նաև հունարեն աստվածաշնչի մեկ օրինակը։

Նալբանդյանին հետաքրքրել են ժողովրդական երգերը, ասացվածքները, առակները. Նրա գրքերի մեջ գտնում ենք Հովհ. Արզանյանի «Հայկական առածներ և ավանդություններ» ռուս նշանավոր առակագիր Կռիլովի. Դիմիտրևի և Խեմնիցերի առակների հայերեն թարգմանությունը երգարաններ և այլն։

Նալբանդյանի թարգմանություններից պահպանվում է Էժեն-Սյուի «Թափառական հրեայի» առաջին մասը (1857 թ. Մոսկվայի հրատ.), ինչպես նաև նույն գրքի հերոսների գրավյուրաներից 20 նկար՝ կատարված հռչակավոր նկարիչ Գավարնիի կողմից։ Այնուհետև պահպանվում է Կլեմանս

Ռոբերտի «Դիտուհի դը Շերեոզ» գործը, որն իր թարգմանությամբ լույս է տեսել 1858 թ. Մոսկվայում։

Կան «Հյուսիսափայլի» այն համարները, որտեղ տպագրված են նրա երկերը, ինչպես 1858 թ. ամսատետրակ № 12-ը, որտեղ տպված է «Թալիսմաններ» թարգմանությունը։ Նալբանդյանի ձեռքով ամսագրի անվանաթերթի վրա մատիտով գրված է՝ «440 (էջ) պիտո է շարունակել»։ «Հյուսիսափայլի» 1858 թ. № 7-ի անվանաթերթի վրա մեկ անհայտ ձեռքով մակագրված է «Կոմս Էմմանվելի հիշատակարանը կարդացի և ես Մանուկ Քյոռօղլյանս։ Ի Ռոստով, 1884»։ Կան հատ ու կենտ համարներ 1861, 1864 թվականի տետրակներից, որոնց անվանաթերթի վրա, բովանդակության մասում Նալբանդյանի հոդվածների դիմաց, մատիտով նշումներ են արված, ցույց տալու, թե որ էջում է տպագրված։

Հատուկ ուշադրության արժանի են ռուսերեն գրքերը, որոնք բավական մեծ թիվ են կազմում։ Կան բազմաթիվ գրքեր 60-ական թվականների առաջավոր գրողներից՝ լեզվի ու գրականության, պատմության և գերազանցապես բնագիտության զանազան ճյուղերին վերաբերող (աստղաբաշխության, ֆիզիկայի, քիմիայի, բժշկության և աշխարհագրության)։

Նալբանդյանի գրադարանում եղած գրքերի բազմազանությունը, ինչպես նաև նրանց վրա կատարված դիտողությունները ցույց են տալիս, որ նրա մտահորիզոնը շատ լայն է եղել։ Նա աշխատել է գիտության մեջ եղած տեսական հարցերը կապել գործնական կյանքին։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ նա մեծ եռանդով ուսումնասիրել է հատկապես բնագիտական առարկաները։ Գրքերից մի քանիսի վրա կան հետաքրքիր դիտողություններ, ինչպես, օրինակ՝ Ришар, Основания ботаники и физиологии растений, ч. I, 1835. Կան դիտողություններ „Зоотомия" գրքի վրա. հավանորեն այս դիտողությունները կատարել է ուսանողական տարիներին ռեֆերատներ գրելու կապակցությամբ։ Կարևոր և դիպուկ դիտողություն է արված Կատրֆաժի „Превращения в мире животных", 1859, СПБ, գրքի վրա, որի մասին հանգամանորեն խոսել է Ռ. Գաբրիելյանը իր «Նալբանդյանը և բնագիտությունը» հոդվածում (Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» № 1—2, 1940)։

Նալբանդյանը հատուկ սեր ունենալով դեպի բժշկությունը և ուսանելով Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, բնականաբար, հետաքրքրվել է բժշկական գրքերով։ Նրա գրադարանում կան հայերեն և ռուսերեն բժշկական գրքեր, ինչպես Մխիթար Հերացու «Ջերմաց մխիթարություն» (1832 թվականի հրատարակություն), բազմաթիվ ռուսերեն գրքեր բժշկության մասին։

Նալբանդյանը հատուկ հետաքրքրություն է հանդես բերել դեպի աստղաբաշխությունը։ Նա բանտում եղած տարիներին ստացել է Ֆ. Արագոյի գրքերը „Биографии знаменитых астрономов, физиков и геометров", СПБ, 1859, 1-ին և 2-րդ հատորները, որոնց վրա կատարել է հետաքրքիր դիտողություններ։ Այդ գրքի առաջին հատորի վերջում իր ձեռքով կազմել է ցանկ „Оглавление". Իր նամակներից մենք գիտենք, որ նա մտադրություն է ունեցել կազմել նշանավոր գիտնականների կենսագրականները, հավանաբար այդ նպատակով է կազմվել այդ ցանկը։ Մեջ ենք բերում Նալբանդյանի ձեռագիր այդ ցանկը.



Մ. Նալբանդյանի նշումները Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» գրքի էջերում։

ОГЛАВЛЕНИЕ


| | Стр. | | |
|---|---|---|---|
| 1) Гиппарх | 1 | 15) Гевелий | 97 |
| 2) Птоломей | 3 | 16) Аббат Пикар | 100 |
| 3) Аль-Мамун | 4 | 17) Кассини | 101 |
| 4) Альбатений | 5 | 18) Гюйгенс | 104 |
| 5) Абул-Вефа | 6 | 19) Ньютон | 106 |
| 6) Эбн-Юнис | 8 | 20) Рёмер | 131 |
| 7) Король Альфонс | 9 | 21) Флемстид | 132 |
| 8) Региомонтан | 11 | 22) Галлей | 136 |
| 9) Коперник | 12 | 23) Брадлей | 139 |
| 10) Тихо-Браге | 20 | 24) Домонд | 140 |
| 11) Вильгельм IV | 27 | 25) Лакал | 142 |
| 12) Кеплер (Иван) | 28 | 26) Гершел | 146 |
| 13) Галилей | 55 | 27) Бринклей | 177 |
| 14) Декарт | 89 | 28) Гамбар | 189 |
| | | 29) Лаплас | 194 |


*Շարունակելով նույն հեղինակի 2-րդ հատորի ուսումնասիրությունը, նա հետաքրքիր դիտողություն է կատարել գրքի 340-րդ էջում՝ 224 էջի* „Александр Вольта" *գլխի առթիվ: Մատիտով կատարած այդ ընդարձակ դիտողությունը, որը բռնում է մոտավորապես կես էջ, գրված խնամքով, ինչ խոսք, կարող է հետաքրքրել մասնավորապես ֆիզիկոսներին և բնագետներին: Ուստի բերում ենք այն ամբողջությամբ.*

ПРИМЕЧАНИЕ: к странице 224

Правда, в безвоздушном пространстве не происходит сгорание углей, тем не менее полюсы претерпевают сильное изменение, что и служит помехой к повсеместному употреблению электрического освещения, а именно: действием тока, помимо всех химических изменений, частицы угля физически переносятся с анода на катод, вследствие чего первый сокращается, а на втором, напротив, образуется длинный цилиндр, само собой разумеется насчет первого. Конец образовавшегося цилиндра не прочен и скоро отнашивается, чем ток прекращается. Мало этого, стеклянный шар, в котором производится опыт, со внутренной покрывается поверхности налетом тончайших частиц угля, опятьтаки на счет анода, через эту прозрачность шара постепенно уменшается.

Ясно, что после таких явлений нельзя сказать, что при продолжительном опыте угли не изменяются: Араго не дожил до этого открытия, но переводчик обязан был предупредить читателей.

13 декабря
1853

М. Н.

*Նալբանդյանի գրադարանը նայելիս մեր ուշադրությունը գրավեց Բալանդինի խմբագրությամբ* „О внешних чувствах", пер. с нем. под ред. Баландина, СПБ, 1861, *գիրքը: Այստեղից էլ պարզվում է, որ Բալանդին հեղինակը չպետք է շփոթել Նալբանդյանի ենթադրյալ կեղծ անվան հետ:*

*Նալբանդյանի աշխարհայացքի համար հետաքրքիր է Մոլինարի 1860 թ.* „Курс политэкономии" *գրքի առաջին էջի վրա կատարված սուր դիտողու-*

թյունը, որտեղ քննադատության է ենթարկում ռեակցիոն գործիչ-տնտեսագետի գիրքը „Глупее и подлее этого сочинения едва ли я от роду когда-нибудь читал. Примечание Налбандова".

Թեթև նշումներ կատարված են „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа" գրքի առաջին մասի էջ 177-ում։ Եկատերինա կայսրուհու՝ նախիջևանցոց տված հրովարտակի սկզբից նշանակված է իր ձեռքով «№ 1», իսկ վերջում գրված է «տես երես 196»։ Այդ նույն էջի վրա, որտեղ տպագրված է Պողոս կայսրի վավերացումը Եկատերինայի հրովարտակի՝ նշանակված է «№ 2» և գրված է «տես երես 248»։

Մեծ արժեք ունի Նալբանդյանի գրադարանում պահպանված Գրիբոյեդովի „Горе от ума" կոմեդիայի ձեռագիր արտագրված օրինակը, որը դժբախտաբար չունի անվանաթերթ և մենք չկարողացանք արտագրության տարեթիվը իմանալ։ Թե ինչ ճանապարհով է այս ձեռագիրը հասել գրադարան՝ ոչինչ հայտնի չէ։ Ձեռագիրը մենք համեմատեցինք բնագրի առաջին գործողության առաջին էջի լուսանկարվածի հետ և տեսանք որոշ տարբերություններ։ Բնագրում գրված է «Լիզենկա», իսկ այս արտագրված օրինակում «Լիզա», բնագրում՝ „Акт I", այստեղ՝ „Действие I" ... այնուհետև մատիտով թեթև նշումներ կան 12, 13, 14, 16, 17, 21, 35 էջերում, հավանաբար արտագրողը կատարել է սխալներ, որոնք ուղղված են Նալբանդյանի կողմից։

Նալբանդյանը զբաղվել է նաև տարբեր ազգերի լեզվի ու գրականության հարցերով, ուսումնասիրել նրանց ազգային առանձնահատկությունները։ Նա մինչև անգամ մեծ սիրով կարդացել և իր գրադարանում է պահել չին գրող Լիու Պայոյի գիրքը՝ Ցիտենի թարգմանությամբ.—Лиу-Пайо, или рассказы из китайской жизни, Соч. Цитена. Пер. с нем. с мног. литограф. рис., СПБ, 1860.

Նալբանդյանի գրադարանում են պահպանվում զանազան քարտեզներ, բուսաբանական և կենդանաբանական ատլասներ, գեղագրության տետրակներ և իլյուստրատիվ նյութեր։

Գրադարանում հայտնաբերվեցին մի քանի ձեռագիր պատառիկներ Մ. Նալբանդյանի, նրա եղբոր Գրիգորի՝ և ուրիշների ձեռքով գրված։ Դրանցից կարելի է հիշատակել Նալբանդյանի ձեռքով գրված Ռիգոլետտո օպերայից մի միտք իտալերեն լեզվով, նույն այդ թղթի վրա կա գնումների փոքրիկ ցուցակ, որը գուցե կատարել է իր ճանապարհորդության ընթացքում։ Մնացած թղթերը դրամական հաշիվներ են և մի ոտանավոր գրված մեզ անհայտ ձեռագրով։

Գրադարանում կան օտար լեզուներով գրքեր, որոնց մեծ մասի վրա իր ձեռքով գրված է՝ „Nalbandian" կամ „M. N."։ Մենք կբավարարվենք կցել այս ծանոթությանը նաև օտար լեզուներով գրքերի ցուցակը։

Այս ծանոթությունից հետո անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Նալբանդյանի անձնական գրադարանի ցուցակը, որը հնարավորություն կտա գրականագետներին և գիտության մյուս ճյուղերի աշխատողներին՝ ծանոթանալու հրապարակախոսի օգտագործած գրականությանը։



Մ. Նալբանդյանի նշումները Ֆ. Արագոյի գրքի վրա։

# Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1. Ագաթանգեղոս, *Ագաթանգեղայ պատմութիւն։ Ի Վենետիկ, 1862։*

2. Ալիշան Ղևոնդ, *Յուշիկք հայրենեաց հայոց։ Ի Հ. Ղեոնդէ Մ. Ալիշանէ։ Ի ս. Ղազար Վենետկոյ, 1870։*

3. Ալիշան Ղևոնդ, *Տեղագիր հայոց մեծաց։ Ի Վենետիկ, 1855։*

4. Ալիշան Ղևոնդ, *Նուագք Հ. Ղեոնդայ Մ. Ալիշանեան։ Ի Վենետիկ, 1857—58։ Հատոր Ա, Բ, Գ, Ե։*

5. Այվազովսկի Գաբրիել, *Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետիկոյ։ Փարիզ, 1857։*

6. *Աստուածաշունչ, գիրք Հնոց և Նորոց կտակարանաց շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչացն։ Ի Վենետիկ, 1733։*

7. *Աստուածաշունչ, գիրք Հնոց և Նորոց կտակարանաց շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց։ ԻՍՊԲ, 1817։*

8. *Աստուածաշունչ, Մատեան Հին և Նոր կտակարանաց, բաժանեալ ի չորս հատորս։ Ի Վենետիկ, 1805։*

9. Ավետիքեան Գաբրիել, *Քերականութիւն հայկական։ Ի Վենետիկ, 1815։*

10. Ավգերեան Յարութիւն, *Բառարան համառօտ ի գաղիականէ ի հայ։ Աշխատասիրութեամբ տն. Հ. Յարութիւն վարդ. Աւգերեան Անկիւրացւոյ Մխիթարեան։ Ի Վենետիկ, 1812։*

11. Արզանյան Հովհաննես, *Հայկական առածներ և ավանդություններ, որ պարունակում է զանազան բարոյական, տնտեսական և կրոնական խորհուրդներ։ Ժողովյալ և բացատրյալ Հովհաննես Մ. Արղանյանց մականվանյալ Սայաթնով։ ՍՊԲ, 1857։*

12. Արիստակես Լաստիվերտցի, *Պատմութիւն Արիստակեայ վարդ. Լաստիվերտցւոյ։ Ի Վենետիկ, 1844։*

13. Բագրատունի Արսեն, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, ի Հ. Արսենէ Կոմիտասայ Բագրատունւոյ։ Ի Վենետիկ, 1852։*

14. Բագրատունի Արսեն, *Տարերք հայերէն քերականութեան դպրատանց տղոց համար։ Յօրինեց Հ. Արսեն Կոմիտաս Բագրատունի։ Ի Վենետիկ, 1864։*

15. Բալակիրև, *Զուարճաբանութիւնք Բալակիրևի, պալատական զուարճախօսին կայսեր ռուսաց Մեծին Պետրոսի։ Թարգմ. ռուս. լեզ. Ավետիք Խազեզեանց։ ՍՊԲ, 1858։*

16. Բժշկեան Մինաս, *Հմտութիւն մանկանց ի պէտս ազնուազարմ մանկան Տիրանայ Ալեքսանեան։ Ի Հ. Մինաս վ. Բժշկեան։ Ի Վենետիկ, 1832։*

17. Բժշկեան Մինաս, *Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին։ Շարադրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք, տն Հ. Մինաս Բժշկեանց։ Ի Վենետիկ, 1830։*

18. Գրիգոր Լուսաւորիչ, *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, Յաճախապատում ճառք և աղօթք։ Ի Վենետիկ, 1838։*

19. Գրիգոր Նարեկացի, *Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հռետորի։ Բաշխեալ յիննսուն և հինգ բանս՝ հոգեսուն մաղթանաց։ Պոլիս, 1822։*

20. Գրիգոր կաթողիկոս, *Գրիգոր կաթողիկոսի տղայ կոչեցելոյ նամականի։ Ի Վենետիկ, 1838։*

21. Գրիգոր Նարեկացի, *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, երկրորդ մատեան ճառից։ Ի Վենետիկ, 1827։*

22. Գրիգոր Նարեկացի, *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատեան ողբերգութեան։ Կ. Պոլիս, 1852։*

23. Գրիմմ, *Գերմանական ազգային առակներ եղբարց Գրիմմայ աշխատութեամբ հավաքուած։ Թարգմ. ֆրանս. Եւայի Տեր-Գրիգորեանց։ ՍՊԲ, 1864։*

24. Գրիգոր Նարեկացի, *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկա վանից վանականի մատենագրութիւնք։ Ի Վենետիկ, 1840։*

25. *Գիրք Սաղմոսաց Դաւթի։ Ի Վենետիկ, 1842։*

26. *Գիրք Սաղմոսաց Դաւթի։ Ի Վենետիկ, 1840։*

27. Դաւիթ, *Սաղմոսարան Դաւթի մարգարէին։ Ի Վենետիկ, 1786։*

28. Դեֆո, *Պատմութիւն վարուց Ռօպինսոնին Քրիւզօէ։ Թարգմ. գաղ. լեզուէ յաշխարհաբար ի Հ. Մինաս վարդ. Բժշկեան։ Ի Վենետիկ, 1836։*

29. Դիրներեան Յովհաննէս, Հարիւր և չորս սուրբ պատմութիւն։ Հաւաքեալ ի հին և նոր կտակարանաց յօգուտ մանկանց, աշխատասիրութեամբ Յովհաննու Դիրներեան, հանդերձ յաւելուածովք հոգեշահ խրատուց և պտղոց բարեպաշտութեան։ Ի ռուս լեզուէ հայացոյց Իսահակ Սահառունի։ Ի ս. Էջմիածին, 1838։

30. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ Թարգմ. մատենադարանէ պատմագրութեանց Դիոդորոսի Սիկիլիացւոյ Գաբրիել սարկ. վարժ. Պատկանեանց։ ՅԱստրախան, 1827։

31. Եզնիկ Կողբացի, Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի, Եղծ աղանդոց։ Ի Վենետիկ, 1826։

32. Եղիշէ, Եղիշէի պատմութիւն Վարդանանց։ Ըստ Անձեւացեացն օրինակի։ Թէոդոսիա, 1861։

33. Եղիշէ վարդապետ, Եղիշէի վարդապետի վասն Վարդանաց և հայոց պատերազմին։ Ի Վենետիկ, 1864։

34. Եղիշէ, Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք։ Ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց։ Ի Վենետիկ, 1859։

35. Զենոբ Ասորի, Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի։ Ի Վենետիկ, 1832։

36. Էմին Մկրտիչ, Վէպք հնոյն Հայաստանի, քննութիւն, Մկրտիչ Էմինի։ Մոսկվա, 1850։

37. Թաղիադեանց Մեսրովբ, Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկ. ս. Էջմիածնի ի Հայս։ Հատոր Ա։ Ի Կալկաթա, 1847։

38. Թաղիադեանց Մեսրովբ, Ճանապարհորդութիւն Մ. Դ. Թաղիադեանցի ի Պարս։

39. Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։

40. Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։ Կ. Պոլիս, 1830։

41. Լոյոլայ Իգնատիոս, Հրահանգք կրթութեան յավիտենական կենաց կարգեալ ի ս. Իգնատիոսէ Լոյոլայ։ Թարգմ. ի Հ. Պետրոսէ վ. Մինասեանց։ Ի Վենետիկ, 1854։

42. Խալդարեան. Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան։ ՍՊԲ, 1788։

43. Խաչատուր Էրզրումեցի, Բանք և քարոզ յաղագս տէրունական տօնից և սուրբ աղուհացից։ Շարադրեցեալք ի Խաչատրոյ Էրզրումեցւոյ։ Ի Վենետիկ, 1710։

44. Խատամեան Թէոդորոս, Պատասխանիք առ անիրաւ գրպարտութիւնս իմաստակի ուրումն ընդդէմ նոր քերականութեանն դրաբար լեզուիս հայոց տպելոյ աստ ի նախընթաց ամի։ Ի Մոսկով, 1828։

45. Խուդաբաշեան Ալեքսանդր, Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ։ Աշխատասիրութեամբ Աղեքսանդրի Մակարեան Խուդաբաշեանց։ Հատ. I և II։ Ի Մոսկով, 1838։

46. Կիրակոս Գանձակեցի, Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ։ Ի Վենետիկ, 1865։

47. Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոց և մահմեդական կրօնի։ Յաշխարաբար լեզուի շարադրեալ յումեմնէ հոգեսիրէ ի պէտս պարզամտաց։ Ի Մոսկով, 1831։

48. Յարութիւն Եդեսացի, Ներբող որդւոցն որոտման սրբազան առաքելոցն մեծին Յակոբայ և աստուածաբան աւետարանչին Յովհաննու։ Յօրինեալ ի Յարութիւն վարդ. Եդեսացի։ Ի Կ. Պոլիս, 1823։

49. Հեթում պատմիչ, Հեթում պատմիչ թաթարաց։ Յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ։ Ի ձեռն Հ. Մկրտիչ աթոռակալ վարդ. Աւգերեան։ Ի Վենետիկ, 1842։

50. Յաղագս բարւոյ։

51. Յիլիա Մինեադիս, Գիրք, որ կոչի վէմ գայթակղութեան։ Շարադր. Յիլիա Մինեակիսէ եպիսկ. Ֆալավռիդացն վիճակի, ի խնդրոյ ուրումն իշխանի։ Թարգմ. հունաց լեզուէ ի հայս։ Ի Կոստանդնուպոլիս, 1767։

52. Յետին ժամք կենաց կայսեր Նիկողայոսի առաջնոյ։ Ի ռուս լեզուէ փոխեաց ի հայ Մսեր Գրիգորեան Մսերեանց։ Ի Մոսկուա, 1855։

53. Յովհաննէս Աւձնեցի, Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք։ Ի Վենետիկ, 1833։

54. Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցի, Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին։ Մոսկվա, 1853։

55. Յովհաննէս Մամիկոնեան, Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի պատմութիւն Տարօնոյ։ Գիրք Զենոբ Ասորի Պատմութիւն Տարօնոյ։ Ի Վենետիկ, 1832։

56. Յովհանն Մանդակունի, *Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի, ճառք։ 2-րդ տպ.։ Ի Վենետիկ, 1860։*

57. Յովհաննէս վարդապետ Հաննա, *Գիրք պատմութեան սրբոյ և մեծի քաղաքիս այ Եղէմիս և սրբոյ տնօրինականաց տեղեաց տն. մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ի Երուսաղէմ, 1782։*

58. *Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց Հայաստանեայց ·ուրբ եկեղեցւոյ։ Թարգմանութիւն։ Ի Տփխիս, 1825։*

59. Ղազար Փարպեցի, *Ղազար Փարպեցու գրած թուղթը։ Մեղադրություն ստախոս աբեղաներին։ Թարգմ. և բացատր. Մ. Նալբանդյանցի։ Մ. Նալբանդյանի համառոտ կենսագրությունը։ Տպագր. Մ. Տեր-Գրիգորյանցի։ ՍՊԲ, 1868։*

60. Ղազար Փարպեցի, *Ղազարայ Փարպեցւոյ թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնէից։ Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին։ Մոսկվա, 1855։*

61. Ղուկաս Ինճիճեան, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ։ Աշխատ. տն. Հ. Ղուկաս վարդ. Ինճիճեան։ Ի Վենետիկ, 1806։*

62. Ղուկաս Ինճիճեան, *Դարապատում, տեառն Հ. Ղուկասու վարդ. Ինճիճեան։ Որ է աշխարհարար կամ ընդհանուր պատմութիւն. քաղաքական, եկեղեցական, ուսումնական և արուեստական դարուց ի դարս բաժանեալ։ Հատ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8։ Ի Վենետիկ, 1824—25։*

63. Ղուկաս Ինճիճեան, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի տն. Հ. Ղուկաս աթոռակալ վարդապետի Ինճիճեան։ Հատ. I և II։ Ի Վենետիկ, 1835։*

64. Ղուկաս Ինճիճեան, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց տն. Հ. Ղուկաս վարդապետի Ինճիճեան ի միաբանութենէ Մխիթարեան։ Ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց։ Հանեալ ի գրոց մերոց նախնեաց և այլոց ազգաց։ Մեծ Հայք։ Ի Վենետիկ, 1822։*

65. Միլտովն, *Դրախտ կորուսեալ, թարգմանութիւն յանգլիական բնագրէ Հ. Յարութիւն վ. Ավգերեան։ Ի Վենետիկ, 1824։*

66. Մխիթար Աբբա, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի։ Երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ Մեծին Մխիթարայ Աբբահօր Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտիչ Աւգերեան։ Ի Վենետիկ, 1836—37։*

67. Մխիթար Այրիվանցի, *Պատմութիւն հայոց։ Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին։ Մոսկվա, 1860։*

68. Մխիթար Գոշ, *Առակք Մխիթարայ Գոշի։ Ի Վենետիկ, 1854։*

69. Մխիթար Հերացի, *Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ, Ջերմանց մխիթարութիւն։ Ի Վենետիկ, 1832։*

70. Մովսէս Խորենացի. *Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք։ 2-րդ տպ.։ Ի Վենետիկ, 1865։*

71. Մովսէս Կաղանկատուացի. *Պատմութիւն Աղուանից աշխարհի։ Ի լոյս ընծ. Մկրտիչ Էմին։ Մոսկվա, 1860։*

72. Մուզայէ Արարատեան, *Յաղգալոյս ճեմարանէ տեարց Եղիազարեանց առ հասակակիցս արձակեն զառաջին զայս փունջ բանահիւսութեանց, հրավիրեալ զնոսա յայս աղբիւր լուսավորութեան, գալ աջակցիլ ի քերուբաքանդակ ճախարակութիւն տողաչափութեանց։ Ի Մոսկով, 1829։*

73. Նազարեանց Ստեփաննոս, *Ստեփաննոսի Նազարեանց վարդապետի արևելեան լեզուագիտութեան յաղագս փորձական հոգեբանութեան ճառ։ Ի Մոսկվա, 1851։*

74. Նազարեանց Ստեփաննոս, *Հանդէս նոր հայախօսութեան, աշխատութիւն Ստեփաննոս վարդապետի Նազարեանց։ Առաջին և երկրորդ մաս։ Մոսկվայի մէջ, 1857։*

75. Նազարեանց Ստեփաննոս, *Ստեփաննոսի Նազարեան վարդապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ։ Մոսկվայի մէջ, 1855։*

76. Նալբանդյան Միքայել, *Երկեր, հատ. I և II։ Ռոստով, 1903։*

77. Նալբանդյանց Միքայել, *Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ. աշխատասիրեց Սիմեոն Մանիկյան։ Փարիզ, 1862։*

78. Ներսէս Լամբրոնացի, *Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին։ Ի Վենետիկ, 1847։*

79. Ներսէս Կլայեցի, *Ողբ Եդեսիոյ, յորինեալ տն. Ներսէսի Կլայեցւոյ երանաշնորհ հայրապետի հայոց։ Ի Տփխիս, 1829։*

80. Ներսէս Շնորհալի, *Գիրք, որ կոչի ընդհանրական։ Արարեալ սրբազնասուրբ հայրապետին մերոյ տն. Ներսէսի Շնորհալւոյ։ ՍՊԲ, 1788։*

81. Ներսէս Շնորհալի, *Տեառն Ներսէսի Շնորհալւոյ հայոց կաթողիկոսի Նամականի*։ Ի Վենետիկ, 1838։

82. *Նոր կտակարան սրբոյ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*։ Ի ՍՊԲ, 1814։

83. *Նոր քնար Հայաստանի*.

*Տետր Ա. Աղամայ Երևանեցւոյ։ Զանազան երգք։ Մոսկվա, 1855։*

*Տետր Բ. Յովհաննես Կարապետեանի։ Զանազան երգք։ Ի Մոսկվա, 1856։*

*Տետր Գ. Յովհաննես Շահրամանեանց։ Զանազան երգք։ Ի Մոսկով, 1856։*

84. Շահնազարեանց Կարապետ, *Արհեստ թուաբանութեան։ Աշխատասիրեալ ի Կարապետ Ա. սարկավագէ Շահնազարեանց։ Բովանդակեալ յերկուս մասունս։ Մասն առաջին։ Ի սուրբ Էջմիածին, 1842։*

85. Չամչեան Միքայել, *Պատմութիւն հայոց, ի սկզբանէ մինչև ցամն տն. 1784, ըստ աւանդելոյ այլ և այլ մատենագրաց։ Հատ. Ա. Բ. Գ.։ Ի Վենետիկ, 1784—86։*

86. *Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ։ Ի Վենետիկ, 1842։*

87. *Պատմութիւն և պատճառք վերադարձի երից վարդապետացս հայոց Սարգսի, Գաբրիէլի և Ամբրոսեայ ընդ հովանեաւ լուսաւորչական սուրբ աթոռոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։ Փարիզ, 1856։*

88. [Գ. Պատկանեան], *Միջնավէպք հայոց ազգի պատմութենէն։ ՍՊԲ, 1864։*

89. [Գ. Պատկանեան], *Շավարշ երկրորդ կամ նորոգեալ Հայաստան։ Պատմական բանաստեղծութիւն։ ՍՊԲ. 1864։*

90. Պատկանեան Սերովբէ, *Երգք։ Սերովբէ Պատկանեան ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Ավետիքայ Խազեզեանց։ Ի Մոսկով, 1857։*

91. Պուտուրեան Վրթանէս, *Պատմութիւն Գենովափէի դքսուհւոյն Բրիտանիոյ։ Շարագրեաց Հ. Վրթանէս վ. Պուտուրեան, 2-րդ տպ.։ Ի Վենետիկ, 1858։*

92. Ջուղայեցի Յովհաննես, *Բժշկարան համառօտ. շարագրեալ բժիշկ Ջուղայեցի Յովհաննես Քալանթարեանի։ Սրբագրեալ զգուշութեամբ ի վերայ հեղինակին ձեռագրոյ ի Թադդէոս վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ Մարուքեանի։ Ի Նախիջևան, 1793։*

93. Սեբ Եփրեմ, *Պատմութիւն հին և նոր կտակարանի. աշխատասիրութեամբ Հ. Եփրեմայ վարդապետի Սեթ։ 2-րդ տպ.։ Ի Վենետիկ, 1844։*

94. Սերովբէ վարդապետ, *Ծաղիկ գիտութեանց. աշխատասիրեալ ի Սերովբէ վարդապետէ, ի պէտս դպրոցաց Հայաստանեայց։ Զարդարեալ 52 պատկերօք։ Ի Մոսկով, 1819։*

95. *Սխալմունք դասատետրին մեկնութեան խորհրդոյ և արարողութեանց սրբոյ պատարագին։ Տպելոյ ի Թէոդոսիա ի տպարանի Խալիպեան ուսումնարանին։ Ի ս. Էջմիածին, 1863։*

96. Սողոմոն իմաստուն, *Իմաստութիւն Սողոմոնի։ Ի Վենետիկ, 1827։*

97. Սիւ Էժեն, *Թափառական հրէայ։ Գործ Եւժեն Սիւ ֆրանսացու, հեղինակի Փարիզեան գաղտնիքների և այլ գրվածների։ Միքայել Նալբանդեանցի աշխատութիւնով։ Մոսկվայի մէջ։ 1857։*

98. *Սոփերք Հայկականք։ Հատ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, ԺԱ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ։ Ի Վենետիկ, 1853—1861։*

99. Ստեփաննոս Սիւնեցի, *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսականի։ Ի լոյս ընծ. Մկրտիչ Էմին։ Մոսկվա, 1861։*

100. Վարդան Բարձրբերդցի, *Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերականի։ Ի լոյս ընծ. Մկրտիչ Էմին։ Մոսկվա, 1861։*

101. Վարդան վարդապետ, *Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ։ Ի Վենետիկ, 1862։*

102. Ռոբերտ Կլեմանս, *Դքսուհի դը Շեվրեօզ Կլեմանս Ռոբերտի գործը։ Միքայել Նալբանդեանցի աշխատասիրութեամբ։ Մոսկվա, 1858։*

103. Փավստոս Բուզանդացի, *Փավստոսի Բուզանդացւոյ պատմութիւն հայոց, ի չորս դրպրութիւնս։ Ի Վենետիկ, 1832։*

104. Փափազեան Իգնատիոս, *Պատճենք նամակաց վաճառականութեան, Հ. Իգնատիոս վարդապետի Փափազեանց։ Ի Վենետիկ, 1826։*

105. *Փելիքս և Պաւլինէ կամ Ժուրայ լեռան տակի գերեզմանը։ Վիպասանութիւն։ Թարգմ. իտալերենից Գրիգոր Թորոսեանի։ Փարիզ, 1859։*

106. Քաջունի Մանուէլ, *Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց դպրատանց աղայոց համար. աշխատասիրեց Հ. Մանուէլ վարդ. Քաջունի։ Վենետիկ, 1857։*

107. Քաջունի Մանուէլ, Հնախօսութիւն Հայաստանի, ի պէտս դպրոցաց, ի Հ. Մանուէլ Քաջունի։ Վենետիկ, 1855։

108. Քռիլով, Ծաղկաքաղ առակացն Քռիլովի, Տմիթրիևի և Խեմնիցերի։ Թարգմ. Յարութիւն ավագ սարկ. Կեորչեանց։ Մոսկվա, 1849։

109. Արովեան Խ., Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի, պատմական վէպ։ Թիֆլիս, 1858։

110. Տոռվատոր, ողբերգութիւն չորս մասն բաժանված, երաժշտութիւն պ. Յովսէփի Վերդի. աշխատութիւն Յովհաննես Սահրատեանց։ ՍՊԲ, 1864։

111. Օրինակք հայկական արուեստագրութեան ի պէտս դպրոցաց, աշխատասիրեալ և Մկրտիչ վարժ. Էկենեան։ Ի Ն. Նախիջեան, 1846։

112. Գիրք սաղմոսաց Դաւթի։ Փարիզ, 1858։

113. Հյուսիսափայլ, 1858, №№ 1, 4, 7, 8, 9, 10, 12։
1861, №№ 1, 4, 5, 6, 9, 11, 12։
1864, № 12։

114. Արարատ, 1850, №№ 12, 14, 15, 16։

115. Հունարեն աստվածաշունչ։

116. Ասիայի քարտեզը։

117. Եվրոպայի քարտեզը։

118. Կենդանաբանական ատլաս։

119. Բուսաբանական ատլաս։

1. *Агассис, Л.* Очерки сравнительной физиологии. Строение и развитие животных, ныне живущих и изчезнувших, соч. Л Агассиса и А. А. Гольда с Лондонского изд. док. Томаса Райта. Пер. и изд. под ред. Б. Аверкиева (с многими рисунками в тексте), СПБ, 1861.

2. *Александров, Фр.* Зоология для первоначального чтения, сост. Фр. Александровым. 2-е изд., испр. и дополн., СПБ, 1863.

3. *Апухтин.* Описание некоторых учебных заведений Франции, Бельгии и Пруссии. Извлечение из отчета о заграничной поездке, представленного управляющему межевым корпусом генералу от инфантерии М. Н. Муравьеву, начальной школы межевых топографов полковником Апухтиным, СПБ, 1863.

4. *Араго, Ф.* Биографии знаменитых астрономов, физиков и геометров, соч. Ф. Араго, пер. Д. Перевощиков, СПБ, 1859. т. I, II, III.

5. *Араго Франсуа.* Гром и молния. Ученая записка Франсуа Араго, пер. М. С. Хотинским, СПБ, 1859.

6. *Араго, Франсуа.* Историческая записка о паровых машинах, соч. Франсуа Араго, пер. М. С. Хотинским, СПБ, 1861.

7. *Араго Франсуа.* Общепонятная астрономия, соч. Франсуа Араго, пер. М. С. Хотинским (с 360 картами, чертеж. и рис.), СПБ, 1861. т. I, II, III и IV.

8. Библиотека медицинских наук, изд. под. ред М. Хана, СПБ, 1857.

9. *Бирнбаум, Г.* Царство облаков. Популярное изложение атмосферических давлений (метеорология), соч. д-ра Г. Бирбаума, пер. и изд. под ред. А. М. Наумова со многими политипажами в тексте, СПБ, 1861.

10. *Богданович Ипполит Федорович.* Собрание сочинений и переводов Ипполита Федоровича Богдановича. Собр. и изд. Платоном Бекетовым, изд. 2-е, М., 18'8, ч. I–III.

11. *Бок, Карл Эрнест.* Руководство к патологической анатомии и диагностике с применением к употреблению при постели больного. Сост. д-м Боком Эрнестом Карлом. Пер. с нем. докт. мед. Людовиком Севруком, М., 1853.

12. *Будагов, Лазар.* Практическое руководство турецко-татарского адербиджанского наречия. Сост. адюнктом импер. СПБ университета Лазарем Будаговым, М., 1857.

13. *Бурмейстр, Герман.* Геологические этюды. Соч. Германа Бурмейстера. Пер. с нем. Николай Михайловым, СПБ, 1863.

14. *Бушю, Э.* Руководство к изучению детских болезней с предварительными наставлениями о гигиене и физическом воспитании детей. Проф. Э. Бушю, пер. с послед. изд., СПБ, 1857.
15. *Брюэр, Д.* Ключ к науке, или явления из вседневной жизни, объяснения Д. Брюэром, пер. с 3-го фран. изд., испр. и дополн. аббатом Муаньо, СПБ, 1862.
16. *Валле, Ф.* Руководство к терапии, доктора Ф. Л. Валле, пер. с послед. изд. с добав., СПБ. 1857.
17. *Валле, Ф.* Руководство к терапии доктора Ф. Л. Валле, пер., с послед. изд., СПБ, 1858.
18. *Вебер.* Общепонятное описание устройства железных дорог, их подвижного состава и управления ими, в историческом, техническом, административном и статистическом отношениях, соч. Вебера, с 90 полит. пер,. под ред. И. Вышнеградского, СПБ, 1859.
19. *Видал, А.* О венерических болезнях, проф. А. Видаля, пер. с. послед. изд., СПБ, 1857.
20. *Греч, Николай.* Начальные правила русской грамматики. Изд. Николаем Гречем. Изд. 5-е, дополн., СПБ, 1857.
21. *Даген.* Теория теплоты из физики Дагена. Пер. под. ред. акад. Э. Ленца, СПБ 1861.
22. *Дмитриев, И.* Практическое руководство к измерению земель и составлению межевых планов, приспособленное к работам по наделу крестьян, вышедших из крепостной зависимости, сост. И. Дмитриевым, СПБ, 1862.
23 *Езник.* Об учении персидских магов, соч. Езника, арм. писателя V века, гор. Езова, СПБ, 1858.
24. *Жерар, Шарл.* Введение к изучению химии, по унитарной системе Шарля Жерара, пер. Д. Аверкиева и П. Алексеева, СПБ, 1859.
25. *Золотов, В.* Арифметика для начальных и сельских училищ, сост. по методе Грубе В. Золотовым. Изд. 3-е, напеч. со 2-го с некоторым изменением, СПБ. 1861.
26. *Ильенков, П.* Курс химической технологии, 2-е изд., вновь пересм., изм. и знач. допол. Е. Андреевым, СПБ, 1861.
27. Карманная хозяйственная библиотека, собрание наставлений и руководств по части сельского хозяйства и домоводства, СПБ, 1858.
28. *Катрфарж, А.* Превращения в мире животных, соч. А. Катрфажа. Пер. док. медиц. Фр. Журковским, изд. под ред. Н. Хотинского, СПБ, 1859.
29. *Квенштедт, Фридрих-Август.* Начальные основания минералогии, д-ра Фридриха-Августа Квенштедта. Пер. и изд. под ред. П. А. Пузыровского, СПБ, 1861.
30. *Кивиш, Ф. А.* Руководство к частной патологии и терапии женских болезней, профессора Ф. А. Кивиша, Пер. с послед. изд., ч. I и II, СПБ, 1857.
31. *Кобелл, Франц.* Таблицы для определения минералов помощию химических исследований, мокрым и сухим путями Франца фон-Кобелля. Пер. с 7-го нем. изд., ред. Л. А. Пузыревского, СПБ, 1863.
32. *Коклен.* О кредите и банках, соч. Коклена, пер. под ред. К. Вasковатова, СПБ, 1861.
33. *Кольб, Г. Ф.* Руководство к сравнительной статистике, Г. Ф. Кольба. Пер. и допол. под ред. А. Корсака, СПБ, 1862.
34. *Котт, Б.* Практическая геогнозия для сельских хозяев, лесничих и техников, д-р Б. Котта. Пер. и изд. под ред. П. Пузыревского, СПБ, 1862.
35. *Крюгер,* Школа физики или учебник к первоначальному изучению этой науки при помощи самых простых опытов и дешевых снарядов с применением к обыденной жизни, соч. Крюгера. Пер. под ред. Поленова, изд. под ред. Д. Аверкиева, СПБ, 1861.
36. *Кубарев, Алексей.* Латинский синтаксис, заимствованный из краткой грамматики Бредера, с примерами того же автора, предложенными в виде тем для начинающих, Алексеем Кубаревым, М., 1837.

37. *Курсель—Сенелл.* Теоретический и практический трактат о политической экономии, соч. Курселя—Сенелля. Пер. Я. А. Ростовцева, изд. Николая Тиблена, СПБ, 1861.
38. *Лаплас.* Изложение системы мира, соч. маркиза Лапласа. Пер. М. С. Хотинским, СПБ, 1861, т. I—II.
39. *Леманн.* Краткая животно-физиологическая химия, соч. д-ра Леманна. Пер. А. Беляев. Изд. под ред. Л. И. Ходнева, СПБ, 1860.
40. *Леймери.* Курс общей минералогии, соч. Леймери. Пер. и изд. под ред. А. Ушакова с 256 в тек. напеч. фигурами, СПБ, 1861.
41. *Либих, Ю.* Письмо о химии Ю. Либиха пер. с послед., испр. и доп. изд., М., 1855.
42. *Ленц, Э.* Руководство к физике. Сост. по поручению министра народного просвещения для русских гимназий акад. и проф. Э. Ленцом, СПБ, 1852.
43. *Либих, Юстус.* Письма о химии Юстуса Либиха с 4-го исправ. и допол. нем. изд. с целым рядом новых писем, посвящ. сельскому хоз., пер. и изд. под ред. П. Алексеева, СПБ, 1861.
44. *Мазиус, Руссдорф.* Начальные основания физиологии д-ра Руссдорфа и зоологии д-ра Мазиуса, СПБ, 1860
45. *Макарий архимандрит.* Православно-догматическое богословие, доктора богословия архимандрита Макария, инспектора и ординарного проф. СПБ духовной Академии, СПБ, 1850—1852, т. I, II, III и IV.
46. *Медлер, И Краткая* астрономия, соч. д-ра И. Медлера, Пер. с нем., под ред. А. Путяты, СПБ, 1862.
47. *Молинар, Густав.* Курс политической экономии, читанный в королевском музее бельгийской промышленности Густавом де-Молинари, часть I. Ред. пер. Я. А. Ростовцева, изд. Николая Тиблена, СПБ, 1860.
48. *Моль.* Главнейшие технические применения пара, электричества и света. Паровые машины, электрические телеграфы, гальванопластики и светопись (фотография), д-ра Моля и Раука, СПБ, 1860.
49. *Мор, Ф.* Руководство к химическому анализу—мерою (метода титрирования), соч. д-ра Ф. Мора. Пер. и изд. под ред. А. Н. Ходнева, СПБ, 1859.
50. *Мюллер, И.* Учебник космической физики д-ра И. Мюллера. Пер. и изд. под ред. Н. Ильина, СПБ, 1860.
51. *Эзов, Г. А.* Внутренний быт древней Армении. Историческое исследование, соч. Г. А. Эзова, СПБ, 1859.
52. *Науманн, Карл Фридрих.* Основания минералогии д-ра Карла Фридриха Науманна. Пер. с нем. И. Медведев, изд. под. ред. А. Ушакова, с 400 вновь вырез. политипаж. в тек., СПБ, 1860.
53. *Нелатон, А.* Хирургическая патология, проф. А. Нелатона, СПБ, 1857.
54. *Новлянский М. С.* О разведении и содержании пчел по методе Прокоповича, М., 1856.
55. *Новосильский, П.* Природа и ея силы. Заимствовано из соч. Бабине, Циммермана и др. П. Новосильским. Изд. 2-е, СПБ, 1860—1863, ч. 1, 2, 3, 4.
56. *Новаковский, В.* Этимологический курс русского языка. Учеб. пособие для 1-го общ. класса в военно-учебных заведениях. Сост. В. Новаковский, СПБ, 1858.
57. О внешних чувствах. Пер. с нем. под ред. Баландина, СПБ, 1861.
58. Общая зоотомия.
59. *Оландер, Иосиф.* Практическое руководство к алгебре. Сост. по прогр. военно-учеб. завед. Иосифом Оландером, СПБ, 1862.
60. Описание оптических увеселительных приборов с политипажами, СПБ, 1861.
61. Описание частей света вообще.
62. *Павловский, Иван.* Пространная география Российской империи. Сост. Иваном Павловским, 2-е изд., исправ. и дополн., СПБ, 1846.
63. *Патканов, К.* Исследование о составе армянского языка, СПБ, 1864.

64. *Писаревский, Н* Общепонятная физика. Сост. Н Писаревским. Изд. 2-е, вновь обработ. и знач. умнож., в 3 частях, СПБ, 1858, ч. 1, 2, 3.
65. *Прескотт, Вильям.* История царствования Филиппа второго, короля испанского соч. Вильяма Прескотта. Пер. с англ., СПБ, 1858, ч. 1, 2, 3, 4.
66. Публичные лекции ординарных профессоров: Геймана, Рулье, Соловьева, Грановского и Шевырева. Читаны в 1851 году в императорском Московском Университете, М., 1852.
67. *Пабст, В.* Руководство к сельскому хозяйству, В. Пабста. Пер. с 5-го изд. Я. Калинским. Под ред. А. Советова, СПБ, 1862.
68. *Разумов, Иван.* Опыт землеописания, сост. для средних училищ Иваном Разумовым, М., 1843.
69. *Ранке, Леопольд.* Римские папы, их церковь и государство в XVI и XVII столетиях, соч. Леопольда Ранке, пер. с нем., Берлин, 1834, ч. 1, 2, 3.
70. *Ренъ.* Начальные основания химии. Сост. по Реньо П. Егоровым. Изд. 2-е, испр. и дополн. со 104 чертеж. в тек., СПБ, 1854.
71. *Рапе, Ж.* Начала общественного благосостояния. Руководство к нравственности и политической экономии. Преимущественно назначено для рабочего класса Ж. Рапе. Пер. с фран., изд. под ред. Б. Калиновского, СПБ, 1863, ч. 1.
72. *Ришар.* Основания ботаники и физиологии растений, соч. А. Ришара. С 5-го изд. пер. Вейса, М., 1835, ч. 1. Органография с физиологиею и тексономия. С 14 рис.
73. Словарь церковно-славянского и русского языка, составленный вторым отделением императорской Академии наук, СПБ, 1847, т. 1, 2, 3, 4.
74. *Сканцон, Ф.* Руководство в частной патологии и терапии женских болезней. Пер. с послед. изд., СПБ, 1858, т. 3.
75. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, М, 1833—1938. ч. 1, 2, 3.
76. *Советов, А.* Публичные лекции о сельском хозяйстве А. Советова, СПБ, 1862.
77. *Стоцкии, Д.* Учебное пособие по межевым законам, для обучающихся в землемеро-таксаторских классах. Сост. Д. Стоцким, СПБ, 1863.
78. Теория словесности, курс гимназический. Изд. 3-е. Право изд. принадлеж. департ. народного просвещения, СПБ, 1852—1854, год 1. Риторика, год 3. Паэтика.
79. *Ушаков, Н.* Естественная история насекомых или этномология. Сост. Н. Ушаковым, СПБ, 1861, ч. 1. 2.
80. *Фишель, Эдуард.* Государственный строй Англии, соч. д-ра Эдуарда Фишеля. Пер. П. М. Цейдлера, СПБ, 1862.
81. *Фишер, Куно.* История новой философии Куно Фишера. Пер. Н. Страхова. Изд. Н. Тиблена, СПБ, 1862—1863, т. 1, классический век догматической философии, т. 2, век немецкого просвещения: переход от догматической философии к критической.
82. *Флуранс, П.* Об инстинкте и уме животных, П. Флуранса. Пер. с 3-го фран. изд., СПБ, 1879.
82а. *Фоше, Леон.* Очерки Англии, соч. Леона Фоше. Пер. Дементьева и Хлебникова, СПБ, 1862.
83. *Цейс, Густав.* Учебник всеобщей истории с точки зрения культуры, соч. докт. Густава Цейса, проф. Веймарской гимназии. Пер. Н. Катаева, СПБ, 1862, ч. I, древняя история, вып. I, восточные народы.
84. *Циммерман,* Об электричестве и магнетизме, соч. д-ра Циммермана. Пер. с нем. под ред. А. Горчакова, СПБ, 1861.
85. *Циммерман.* Общия физическия явления или так называемая общая физика, соч. д-ра Циммермана. Пер. с нем. с дополнен., под ред. А. Горчакова, СПБ, 1861.
86. *Циммерман.* Теплота и главнейшия применения ея к технике. Общепонятное руководство, соч. д-ра Циммермана. Пер. с нем. с дополн., под ред. А. Горчакова, СПБ, 1861.

87. *Цитен.* Лnу-Пайо или рассказы из китайской жизни, соч. Цитена. Пер. с нем. с мног. литограф. рис., СПБ, 1860.
88. *Шерр, И.* Всеобщая история литературы И. Шерра. Со 2-го исправ. и дополн. нем. изд., пер. под ред. А. Пыпина, изд. О. Бакста, СПБ, 1863.
89. *Шмидт, Ф.* Овцеводство и шерстоведение, Ф. Шмидта. Пер. со 2-го изд. Е. Фальковым под ред. А. Советова с 9 литографич. изображениями, СПБ, 1863.
90. *Чернопятов, Илья.* О шерсти овец в хозяйственном и фабричном отношениях, сост. Ильи Чернопятов, СПБ, 1863.
91 *Зеленый, А.* Краткое руководство начертательной геометрии с приложениями к рисованию, построению солнечных часов, географическим и морским картам и карабельной архитектуре, сост. А. Зеленым, 2-е изд., СПБ, 1855.
92. *Грибоедов.* Горе от ума. Рукопись.
92а. Русское слово, лит.-ученый журнал, 1862, № 5.
93. Галерея из 80 портретов главных действующих лиц в известном романе Еженя-Сю — Странствующий вечно жид, изображенных во весь рост и литографированных с французского оригинала Г. Гаварни, тетрадь 1, Москва, 1846.
94. *Шиховский, И. И.* Краткая ботаника, 1853, СПБ.
95. *Назарян, Ст.* Обозрение истории гайканской письменности в новейшие времена, Казань, 1846.
96. Образцы словолитни ревильона и комп., СПБ, 1843.
97. *Кушелев-Безбородко.* Русское слово, V, СПБ, 18:2.
1. *Alexandpe Dumas.* Le collier de la Reine, T. IV, V, VI, 1850, Bruxelles.
2. *P. Leon, M. D. Alischan.* Le Haygh la periode et sa fete, Paris, MDCCCLX.
3. *M. D. Alischan, P. Leon,* Physiographie de L'Armenie, MDCCCL. Le lundi nouveaux récits de Marsilius Brunsk, 1835, Bruxelles.
4. *A. Vidal.* Abhandlung über die venerischen Krankheiten, 1853, Leipzig.
5. *C. E. Bock-Hand.* Atlas des Anatomie des Menschen, 1850, Leipzig.
6. *J. J. Berzelius.* Traité de chimie organique, T. I—V, Paris, 1846—1849.
7. *J. J. Berzelius,* Traite de chimie organique, T. VI, 1850, Paris.
8. *M. Charles Gerhardt.* Traite de chimie, T. I, 1853, Paris.
9. *J. B. Glaire.* Principes de grammaire hebraique, et chaldaïque, Paris, 1837.
10. *Cornelii Nepotis.* Vitae excellentum imperatorum, 1845, Mosquae.
11. *J. Michelet.* Reforme, 1861, Paris, VIII.
12. *A. F. Miot.* Histoire d'Herodote, I, II, 1858, Paris.
13. *E. F. Leopold.* Lexison hebraicum et chaldaicum, 1850, Lipsiae.
14. *Constant Tischedort.* Novum testamentum Graece, 1857, Lipsiae.
15. *J. Planche.* Dictionnaire grec-français, Paris, 1858.
16. *Phaedri Augusti,* Liberti fabularum Aesopiarum, 1840, Mosquae.
17. *S. Preiswerk.* Grammaire Hebraique, 1864, Paris.
18. *Herodoti.* Historiarum libri IX, 1860, Lipsiae.
19. *Achille Richard.* Elemente d'histoire naturelle medicale, T. I, 1849, Paris.
20. *J. J. Rousseau.* La nouvelle heloise, 1862, Paris.
21. *J. J. Rousseau.* Les confessions, 1864, Paris.
22. *Ernest Renan.* Histoire generale et systeme compare des langues sémitiques, T. I, Paris, 1863.
23. *M-me Charles Reubaud.* Dona Mariana, 1844, Bruxelles.
24. *Charles Rockingham.* Le Dernier d'egmont, 1851, Brüxelles.
25. *J. Volkel,* Deütsche chrestomothie zum Ubersetzen ins russische.
26. *Orbelian Stephanos.* Histoire de la Siounie, 1864, S.—P.
27. *H. G. Ollendorff.* Nouvelle methode, T. I, II, Paris, 1862.
28. *H. G. Ollendorff.* Clet de la methode, Paris, 1860.
29. *Ollendorff,* Neuer Methode in sechs Monaten eine Sprache lesen, Schreiben und Sprechen zu lernen.
30. *H. G. Ollendorff.* Clet de la nouvelle methode pour apprendre a lire, a ecrire et a parler une langue en six mois. 1861, Francforts—M.